

ԺԱ.

342. Խանտիւթ խաթիւնը խէր լսիր է, թէ Խանտիւթ գնացիր երեկ էրեր, էնու աղայ էլեր, էնու երեկ շատ կտրած է:

Յիւր աղէներուն կըսի.—Ըլեցէք, գինացէք, ըրչկեցէք ձեք եւրուջ հալ լնչ է. մարդու խաւ կուրսըվի, խիւ կան կգեայ, նա խօ ձե քիւրն է:

343. Աղբէրքեր կը կանգնին, ուրինց հեօղ կէնին, կգեան Սասուն, քիւրուջ մօտ, եօթն աղբէրն էլ:

Խանտիւթ խաթիւն շատ կը խնդանայ.

Էրկու շարաթ գաստիր շտայ որ էրթան.

Յըմեն օր, սար կայ, Սիւ սար, կերթան նէջեր կէնին:

344. Աւիւր մէկին Խանտիւթ կըսի Մհերին.

—Մհեր, դիւ էլ կէրն սպանիս վերու ուխտար:

Մհեր կը ծծողայ.—Մարէ՛, կըսի, յըմեն օր իս կսպանիմ.

Ապա, որ իս կսպանիմ, իմ քեռիք հա կը պառկին:

—Մհեր, որդի՛, որ կսպանիս, ա՛ռ, փախի էրի, իս աւտընամ:

—Մարէ՛, կըսի, իս յէս օր մէ ջիւջ վերու ուխտար քերիմ:

345. Կըլնըն կերթան Սիւ սար, քեռիք էն տե կը նստըն.

Մհեր կերթայ մէկ խատ ձիւջ վերու ուխտար կը դարկի,

Որ կսպանի, կառնի, կգեայ:

Քեռիք կերիչկին Մհեր ուխտար առըց գինաց.

Կընկնին յեռէն, կգեան, կը խասնին, կըսին.

—Մհեր, դիւ մի շլիի, դիւ չըս կէրի:

Կըսի.—Ըժը բան չկայ ձե խիտ, իս կէրիմ շլիի:

Կէնին—չէնին չըն կէրի Մհերի ձեռնէն առնի:

346 Խօթն էլ գլխու ուխտարը ձեռ կը թլին, վերուն տիին գետըն: Ապա քեռիքն էլ կըտրած մարդ ին:

Մհեր էլ կըռըկի կը հառստի,

Ձեռ կը թլի որ քեռու փողպատին.

Համա մէմէկ կը տիի գետըն.

Որ կը տիի գետըն, չիւր մէջքը կը թաղուր խուղը մէջ:

347. Զվերու ուխտար կառնը, կգեայ տուն, կը տանը գնը մօր յառէջ: Դաւիթն էլ քնիւր է:

Խանտիւթն էլ կըսի.—Դաւիթ, յըլի վի.

Կը խնդանայ, կըսի.—Դաւիթ, տե՛ս, Մհեր լնչ վիւր ու ուխտար մ'է քերիւր:

348. Դաւիթ աչքեր կը բանայ կըրիչկի, կը ախտնի, մէկ զօռ պա ուխտար մը սպանիւր, քերիւր դերի է տան մէջ: